№ 5 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 18 1895 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 18 № 5

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ, կէս տարուանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՍԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չէ 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անտարբերութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Սալմաստից. Նամակ Մարաղայից Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ,—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ինտելիգենտները։

ՄԵՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

...«Սակայն Հայրենասիրութեան ոգին այնպէս բնաջինջ է եղել նրանց (հայերի) սրտից, որ մինչդեռ օտարազգերը խօսում են, հետաքրքրվում, օգնութեան ձեռք են կարկառում նրանց հայրենակիցներին, սրանք, հնդկահայերը, որ և է մի նշան անգամ չեն ցոյց տալիս, որ և է քայլ անգամ չեն անում»...

Այսպէս է վերջանում Կալկաթայի «Statesman» նշանաւոր լրագրի խօսքերը հնդկահայերի վերաբերութեամբ։

Քիչ է մնացել որ Թասմանեայի վայրենիները շարժուեն, հետաքրքրուին ու յուզուեն մեր հայ եղբայրների աղէտներով, քիչ է մնացել որ քարերն աղաղակեն, իսկ հնդկահայ հարուստները, այդ անդլեսպէս ուտող և խմող հայերը, հանդարտ նստել են իրենց՝ ով գիտէ որպիսի միջոցներով ձեռք բերուած՝ հազարների վրայ և անզգայ ու անհոգ են հանդիսանում դէպի քաղցի ու պարբերական սոսկումների ենթարկուած եղբայրները։

Այդպիսի սաձն անտարբերութիւն միայն հնդկահայերի կողմից չէ որ երևում է, միայն այդ հեռաւոր բուրժուաները չեն որ պապանձուել են։ Այդպիսի զզուելի անորտութիւն երևում է պարսկահայերի մէջն էլ. թէ Թէհրանում, թէ Սպահանում և թէ այլ քաղաքներում։ Մի քիչ Դավրէժն է միայն որ ներկայացումներ է տալիս մի քանի կոպէկ հասցնելու սովատանջներին, տառապողներին. և այն էլ միայն անում են լայն, ազնիւ սիրտ, բայց դատարկ գրպան ունեցող ուսուցիչներ, ազգի այդ նահատակ մշակները։ Իսկ ո՞ւր են այն կրեսոսները, որոնք հազար ու մի տեսակ կեղեքումներով գանձ են դիզում և ասա, երբ իրենց անունը լրագրի մէջ տպել կարելի է, մի քանի կոպէկ են շպրտում հասարակական գործերի համար, ոչ թէ նրանց օգնած լինելու, նրանց զարգացմանը նպաստելու նպատակով, այլ լոկ իրենց անունը աշխարհից աշխարհ հռչակելու համար, որ այս ինչ աղան, այս ինչ բուրժուան այսքան փող տուաւ այս կամ այն ուսումնարանին, եկեղեցուն կամ պորտաբոյծ վարդապետներով լիքը վանքին։ Ո՞ւր են այդ հարուստները, որոնց և ոչ մէկը մի գումար չը տուաւ ամոքելու համար մեր հեռու եղբայրների ցաւերը։ Ո՞ւր են այնաղաները, որոնց արտադրած ժանգը, որոնց մթնոլորդը ավականուած է պահում հոյլ հասարակական հիմնարկութիւնները և պատրաստում մեզ համար իրենցից աւելի կեղծութեան ու ստորութեան մէջ փչացած սերունդներ։ Ո՞ւր են նրանք երբ ներկայանում է այնպիսի անմիջական պէտքեր, որոնցով ոչ թէ պէտք է օգնել փայլելու, այլ թշուառներ մխիթարելու համար...

«Առանց փայլել կամենալու գործել ընկերութեան համար—վայրենին է որ չը գիտէ» ասում է Սպենսերը։

«Եսամօլութիւնը կամ փառասիրական ձգտումների միտումով ալտրուիզմը (altruisme), ասում է նա, յատուկ է միմիայն վայրենի, նախնական ընկերութիւնների (primitive), որոնցից իւրաքանչիւր անդամ ապրում է միմիայն իր համար, և ուտում է իր ընկերին, եթէ փոքր ինչ քաղցածնայ, եթէ իրեն նեղութիւն տայ այդ ընկերը։

Իսկ հասարակական, ընկերական ոգին գոյանում է միմիայն զարգացած մարդու, քաղաքակրթուած հասարակութիւնների մէջ. այդպիսի ալտրուիստական ոգին թէև ունի իբր հիմնաքար՝ էգոիզմը, սակայն խելացի, հեռատես մի էգոիզմ, որ ստեղծում է ընկերական ոգի, ընկերին է օգնում և նրանից օգնվում։ Ինչ որ մենակ չէը կարող անել, անում է ընկերի օգնութեամբ և ահա ընկերական ոգու այդ տարրական հիմունքը հասցրել է մարդկային ազգի շատ ցեղերի այնպիսի բարձրութեան, որ այսօր նրանք հետզհետէ իրենց ոյժի, խելքի և գիտութեան զօրութեան տակ ճմլում փշրում են միւս բոլորը՝ յիմար էգոիզմով ղեկավարուող և ընկերական ոգուց զուրկ՝ ցեղերին»։

Որ ընկերականութիւնը մի ոյժ է, որ հասարակական ոգու խստութիւնը յառաջադիմութեան ֆակտորներից, մի հասարակութեան նեցուկներից գլխաւորն է—սա տարրական ճշմարտութիւն է։

Բայց որ պարսկահայը զուրկ է այդ ոգուց և որ մանաւանդ գտնվում է անմիտ էգոիզմի մէջ—դա էլ ցոյց է տալիս այն անտարբերութիւնը, որը գրտնում է մեր մէջ մեր հեռաւոր եղբայրների դրութիւնը։

Ամբողջ աշխարհը շարժվում է, ոչ մի տեղ մի բուռը հայ չը մնաց որ իր բերնից չը կտրէր և մեր հեռաւոր եղբայրներին ձեռք չը կարկառէր. ոչ մի երկիր չը մնաց, ուր հայերը չը գործէին. միմիայն պարսկահայն է որ շարունակում է իր բուսական էգոիստական կեանքը, օրէցօր կեղտի, բորբոսի և խաւարի մէջ ընկղմում, մեծամեծ հալածանքներ հանում մի քանի՝ իր երեսին ճշմարտութիւնը շպրթողների դէմ և լաւը ոչնչացնելու, կեղտը թագաւորեցնելու համար՝ չէ խնայում ա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԻՆՏԵԼԻԳԵՆՏՆԵՐԸ

Մեր մէջ, ամեն մէկը, որ փոքր ի շատէ գրել կարդալ գիտէ, մաքուր հագնուած է, եղել է քաղաքում, յաճախել է թատրոն, կլուբ, զրատուն, հասարակութեան մէջ, այդպէս ասած, փոքր ինչ շփուել է, կամ իր կեանքում դրել է մի քանի անմեղ, ոչ ոքին չը դիպչող կամ ուղղակի ծիծաղեցնող ու շոյող յօդուածներ—ինքն իրեն ինտելիգենտ է համարում, անուանում և պահանջում, որ ուրիշներն էլ անուանեն. իսկ նրանք, որ վերջացրել են միջնակարգ ուսումնարանի դասընթացքը—ինտելիգենտ են իսօ ինտելիգենտ. բարձրագոյն դպրոցներում եղածների մասին, իսօ էլ չեմ խօսում։

Թաղում են մի երևելի գործողի, կամ դիմաւորում են մի կաթուղիկոսի՝ հայ քաղաքներից գնում են պատգամաւորներ, կամ տեղում են հեռագիրներ ու պսակներ «հայ վաճառականների կողմից» «հայ արհեստաւորների կողմից», «հայ մշակների կողմից» ես ինչ գիտեմ «հայ տիկինների կողմից» և—«հայ ինտելիգենցիայի» կողմից։ «Երևանի վաճառականութիւնը ողբում է», «Բագուայ հայ ինտելիգենցիան» ուրախ է, և խմում է անվեհեր մարտնչողի կենացը» և այլն և այլն... մի խօսքով այդ բառը սաէպ է գործածվում և շատերը, ոչ թէ միայն հայերիս այլ և ռուսների մէջ, իրանք իրանց ինտելիգենտ են անուանում, տալով այդ խօսքին մի առանձին դանակարգի նշանակութիւն ինչպէս «հոգևորականութիւն»,«բէգ», «շինովնիկ», «ազնուական», «իշխան» և այլն։

Պատահել է ինձ, այն էլ ոչ քիչ անդամ, հարցնել «ինտելիգենտներս» ասողներից այդ խօսքի նշանակութիւնը և միշտ ստացել եմ մի և նոյն պատասխանը, թէ «ինտելիգենտը» նշանակում է զարգացած...

—Ինչպէս կը հրամայէք հասկանալ նոյն այդ «զարգացած» խօսքը։

—Զարգացած, էլի..

—Չեմ հասկանում։

—Ով է մեղաւոր որ չես հասկանում, զարգացած լինէիր, կը հասկանայիր—պատասխանում է աքլորական զոռզութեամբ և ինքնաբաւականութեամբ, խօսակիցս։

—Լաւ, դիցուք, ես էլ քեզպէս ընդունում եմ, որ իրաւարանական ֆակուլտետը աւարտածը,—զարգացած է։ Ահա նա մտնելով կեանքի մէջ, փաստաբանելու արդար գործեր չի գտնում (արդարի կողմը բռնել է մի ուրիշ իրաւաբէտ փաստաբան), և, «հաց» գտնելու ուրիշ միջոց չունենալով (ուրիշ արհեստ—բան չը գիտէ), վերցնում է արդարացնելու մի մարդու, որի անարդարութիւնը, նոյն իսկ եղեռնագործ լինելը, յայտնի է իրան, ինչպէս այն որ 2 անդամ 2 անում է 4.—Ինտելիգենտ է նա։

—Հ՛ը՛ը՛ը, ծուռ տալով երկայն, հարցնում է խօսակիցս, կամ խոյս տալիս հարցից։

Ահա այս հաշտարար դատաւորը, կամ դատաստանական քննիչը անտառապետը կամ զաւառապետը, բոլորն էլ համալսարանի գիտութիւն ունեն, բայց կաշառակեր են, կոշտ կոպիտ և անիրաւ։ Ահա մի ուրիշ համալսարանական, որը ուսել է հօր, վաշխառութեամբ, գողութեամբ, կամ նոյն իսկ մարդասպանութեամբ ձեռք բերած փողերով։ Վերջացնելով ուսումը և թողնելով այն մասնագիտութիւնը որը նա սովորել է հօր, վերոյիշեալ կերպով գտնուած փողերով, սկսել է վաճառականութիւն, հանքեր ունի կամ դործարան։ Ինչպէս աւելի բանիմաց, աւելի «հա եկած», նա նախաշաւիղ է կազմում, որի մէջ նախատեսուած են ամեն ծախս ու անհրաժեշտ բաներ. և՛ թանկագին մեքենաներ, և՛ շոգեկաթսաներ, և՛ ջրհաններ, և՛ երկաթ,պղինձ ու հազար տեսակի մթերք—հարիւր հազարների... նա, նոյն իսկ իր համար կառքի ծախսը ձգել է մեծ առատութեամբ. բայց, այդ պարոնը իր բանուոր մշակի վարձը հասցրել է այնքանի որի եռապատիկը ինքը մսխում է իր կատքի իւրաքանչիւր ձիու վրայ... Իր ձիու համար նա կառուցել է մաքուր դոմ, ախոռատուն։ Պահում է առանձին ձիապան, առաձին կառապան. իսկ մշակի համար բնակարան չի շինում—պահում է նրան դետնափոր,լոյսից ու օդից զուրկ խոնաւ խուցերում, կամ բաց երկնքի տակ... Օգտուելով մշակի, իր արենակից հայ եղբօր անելանելի դրութիւնից, նրա վրայ այնքան գործ է դրել, որ մշակը իր շորերը լուանալու, իր կերակուրն եփելու, իր հացն առնելու ժամանակ չունի... Չունի ժամանակ ընկերոջ հետ խօսալու, զրուցելու, իր դրութեան մասին մի բոպէ մտածելու և խորհրդակցելու.... Համալսարանական, զարգացած պարոնը, հաշտով է վարում այդպէս. որով-

մենաստոր միջոցներ իսկ։

Դավրէժն ասում ենք, մի քիչ բացառութիւն է կազմում. այնտեղ մի բուռն ուսուցիչներ շարժվում են, թոք մաշում, տանջվում են որպէս զի մի քանի կոպէկ հասցնեն իրենց կողքին սովից կոտորուող հայ ժողովրդին. իսկ այն բոլոր կրեսոսները, որոնցով լիքն է Դավրէժը, լուռ են. չը լսեցինք որ մէկը մի կոպէկ տար, որ մէկը ցոյց տար որ հայ է ինքը, զգալ գիտէ, յուզուիլ գիտէ իր ազգակցի դրութիւնով։

Իսկ Սպահանը, Մարաղան, Թէհրանը... Քիչ կան այդ կողմերում այնպիսի հայեր, որոնք թղթախաղի մէջ հարիւրներ են տարվում, արբեցութեան ժամանակ տասնեակներ ծախսում և պոռնիկների վրայ իրենց հարստութիւնը շռայլում։

Քիչ կան որ անմիտ զարճութիւնների համար փողեր են դուրս տալիս... և սակայն դեռ չը լսեցինք որ մի հարիւր թուման, մի տասը թուման տար իր եղբայրների գոյութեան համար։

Հասարակական, ընկերական ոգին, դրա հետ հայրենասիրութիւնն և զգացումը, միմիայն մի քիչ քաղաքակրթուած ազգերի յատուկ է և ոչ թէ հայերէն խօսելով, լուսաւորչական լինելով կամ Հայկի առասպելը գիտնալով պարծեցող կիսավայրենի հասարակութիւնների, որոնք սառն անտարբերութեամբ են դիտում իրենց եղբայրների տանջանքը և նրանց դիակների մօտ կանգնած, միմիանց դէմ զզուելի ինտրիգաներ, փողոցային դաւեր լարելով են զբաղվում։

Ոչ հայերէն լեզուն և ոչ լուսաւորչականութիւնն է, որով կարող են պարսկահայ հասարակութիւնները հայ կոչելու, մարդ անուանուելու արժանի լինել. եկեղեցւոյ խաչերն ու պատերը համբուրելով, քահանաների կոկորդը լցնելով և մոմ վառելով չէ որ, կարելի է քրիստոնեայ համարուել, այլ եղբօրը, թշուառ ընկերին ձեռք կարկառելով, նրա համար իր անձը տալով և նրան օգնելու ժամանակ ի բաց թողնելով բոլոր այն, ինչ որ անձնական նեղ, անմիտ շահերն են դրդում։

Քրիստոսի—ճշմարտութեան, անկեղծութեան և ընկերասիրութեան այդ մեծ նահատակի—ամենամեծ և ամենաէական վարդապետութիւնն է

«Սիրիր քո ընկերը ինչպէս քո անձը»։

Այդ խօսքերը ենթադրում են ընկերական մի բարձր ոգի, մի իդէալական զգացմունք, որի մի նշոյլից անգամ կարծես զուրկ են հնդկահայերի հետ պարսկահայերն էլ։

Ցաւալի է, խիստ կսկծեցուցիչ՝ այդ երևոյթը։

Վ. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

—

10 Յունվ. 96

Այժմ դառնանք երկրորդ «ընծային» որ արժանապատիւ հայը Արսէն Վեհունին է։ Սալմաստ գալուց յետոյ՝ ժողովուրդը մեծ յուսով սպասում էր որ հայը սուրբը կ'իրականցնէ այն մեծ-մեծ խոստումները, որ քանիցս արել էր նա իւր անդրանիկ քարոզներում։

Սակայն մի ամսից յետոյ Սալմաստի որ գիւղից էլ որ անցնէիր՝ օրուայ խընդիրն էր հայը Արսէնը և նորա գործունէութիւնը։ Ծրտունջ, անվերջ գանգատներ, անէծքներ էր որ թափում էր խեղճ ժողովուրդը նրա հասցէին։

«Ասանկ չ'լլար, վերջապէս բանով մը պիտի պատժել երկու գանգատուորներէ մէկը...» յաճախ կրկնում էր հայը Արսէնն։ Մենք շատ ուշ հասկացանք այդ «բանով մը պատժելու» փոխաբերական միտքը։

Զարևանդայ Սուրբ Աստուածածնայ վանքի վանահայրութիւնը ինչպէս երևում է շատ էլ հաճելի չ'թուեց հայը սուրբին և նա մի դեղեցիկ օր վանքը բոլորովին ամայութեան մատնելով՝ վանքի իրեղէնները փոխադրեց Հաւթուան, և իւր ասելով՝ «մտադիր է այժմ ժողովրդական պէտքի լոբջ գործերով զբաղուելու...» Բա՛յ կ'նայէք աչքդ օք, ինչ են այդ լուրջ գործերը. ճիշտ այն, ինչ որ մի քանի տարի առաջ անում էր իր նման գատնազդեստ Խոյ-խանը... բռնել խեղճ ժողովրդին և գանագան սուտ ու շինծու պատճառներ բերելով՝ փող կորզել նրանից։

Չեմ ուզում մանրամասնութեանց մէջ մտնել, միայն կ'տամ ընթերցողներին (որքան ինձ յայտնի է) այն տուգանքների ցուցակը, որ առել է հայը Արսէնը մօտ մի ամսուայ ընթացքում Սալմաստի խեղճ ժողովրդից։

Սաւրաջի Յովսէփ Սողոմոնեանից 150 ղրան, պատճառ բերելով, որ ձին արագ է քշել և հրել մի կնոջ։ Նոյնից ևս (տեղը փափուկ է տեսել) 50 ղրան, որ Դիլմանում կռուել է քարտաշ Բաբօյի և Գասպարի հետ։ Քարտաշ Գասպարից 30 ղրան, Բաբօյից 20 ղրան որ յիշեալների խնդրանօք պատժել և տուգանքի է ենթարկել Սաւրաջի Յովսէփին։

Ճարեցի Մելիք Թումայից 200 ղրան, և բռնի ոյժով ստիպել է յիշեալի հարսին վերադառնալ իր ամուսնու մօտ։ (Մի քանի տխուր և անմխիթար պատճառներով Մելիք Թումայի հարսը հեռացած է լինում իւր սկեսրայրի տանից)։

Այստեղ չեմ ուզում բերել այն դրաման որ տեղի ունեցաւ նախ հին-քաղաքում, ապա Հաւթուանում, հայը Արսենի ներկայութեամբ Մելիքի հարսին բռնի Ճարայ քաշելու համար։

Հաւթուան Ղադիմենց տնից 500 ղրան իրեն, 50 ղրան և մի բեռ ցորեն իւր ծառային, ահա թէ ինչ միջոցաւ։

Ղադիմը մեռնելուց առաջ կտակում է 100 թուման եկեղեցուն, մնացորդ իւր ունեցածը իւր եղբօրը՝ Մուրադին ու միւս մեռած եղբօր որբերին։ Հայը (ընդունած չէ առայժմ), բայց ասով էլ քայլ չէ անում և կառքի փողը վճարում է այն աղքատը, որի զրպանում կոպէկ չը կայ և որի մօտ, աւեսարանի աչկերտն ու ծառան, շընորհ է բերել, տան միակ կերակրողին հաղորդութիւն տալու...։

Ահա խմբագիրը, որի ձեռքում մամուլը մի գործիք է իր անձնական շահերը պաշտպանելու, որը լրագրութեան վերայ նայում է ճիշտ այնպէս, որպէս շարչին իր խանութի վրայ, որը նրան հաց դտնելու արհեստ դարձնելով, երբ սուտն է փողի գնում, սուտն է գրում, երբ ճշմարիտը՝ ճշմարիտը. որը, ժողովրդի ապիտութիւնն ու խօսքերով շլանալու դէպքերի մանալով՝ «ազգ» «եկեղեցի» է գոռում և հաճոյանալով, թուլամիտներից փողեր դուրս կորզում. իսկ մտքումը արհամարում և ազգ և՛ եկեղեցի. որը «ամուսնութեան սրբութիւն» և այլ սրբութիւններ է գոռում և ինքը ամեն սրբութիւն ոտի տակ է տալիս, աթէնական գիշերներ է սարքում ամուսնութեան վարագոյրի ետեր ծածկուած և անպատիժ ու յարգուած մնում...։

Ահա օրիորդը, որ վերջացրել է գիմնազիոնի դասընթացքը, գիտէ կոտրատել մի քանի լեզուով, սոխակի պէս երգել, թիթեռի պէս պարել. ճաշակով հագնուած է, դատողութիւն է տալիս այդ ամենի դրուածքի վրայ, գիտէ Բիսմարկի քաղաքականութիւնը, Եւրոպայի պատմութիւնը և ուրիշ շատ բաներ.... Նա ընդունակ է միայն ուսուցչուհի լինելու, բայց, պաշտօն չը կայ։ Պահանջները շատ, ճաշակը զարգացած, իսկ հասարակական կեանքի կազմակերպութիւնն ու օրէնքները այնպէս են որ երբ նա պաշտօն չունի, չունի և փող. և, հետևարար, իր թշուառ գլուխը դնելու տեղ... Ինքնասպանութիւնը դժուար, կիանքը ցանկալի, իր դդութիւնը նա ինչով պահպանի—հարատևել վճռուում է նա... Եւ դո՛ւ, ինտելիգենտ ախպա՛ր, մի օր գնում ես մի բոպէ առնում ու սիրում նրան, իսկ ընդհանրապէս պախարակում ու հալածում... քո տանը երբէք չես ընդունի նրան, ինչ ասել կուզի, որ փողոցում պատահելիս անգամ, կը ձևանես, թէ չես ճանաչում....

(Պը շարունակուի)

հետև հասարակ առևտրականից զարգացած լինելով ուղեղներովը և ոչ սրտով, գիտէ, որ եթէ մշակները իրանց դրութեան վրայ մտածելու ժամանակ ու միջոց ունենան, չեն գալ և ամիսը 13—15 բուրլիով ծառայել ջրի, ցեխի, ձիւնի, նաւթի մէջ։ Այն ժամանակ նոքա այդ չնչին, չոր հացի գին ռոճիկով, օրը 14 ժամ չեն գործի.... Համալսարանական պարոնը իր սրսի շան վրայ աւելի է ծախսում, մըտածում, խնամք տանում, քան թէ իր բանուորի վրայ. այն էլ իրան կերակրող, հարստացնող բանուորի.—ինտելիգենտ է նա։

Լռում է խօսակիցս։

Ահա բժիշկը, կոպտութեամբ, զուռում զոչիւնով դուրս է անում իր տնից—պալատից աղքատին, որ եկել էր նրան հիւանդի մօտ կանչելու։ Նա մերժում է իր օգնութիւնը այն էլ կոպտութեամբ, որովհետև գիտէ, որ նրա դարտակ գրպանից մեծ վարձատրութիւն չի կարելի ստանալ. բայց, հէնց այդ նոյն պարոնը մեծատան առաջին հրաւէրով գլխի վրայ է վազ տալիս և բոլորովին ուրիշ մարդ դառնում... Նա մտնում է հարուստի տունը ժպիտը երեսին, քաղաքավարի. շոյում է տանտիկնոջ զգացմունքները կոմպլեմենտներով «Ի՞նչ լաւ երեխայք ունէք» (որ մայր իր որդկերանց հրեշտակ չէ համարում), «Ի՞նչ հիանալի են ձեր մանուկի աչքերը, ամբողջ հարստութիւն է ձեր աղջկայ մազերը» և այլն և այլն, ասում է նա հաճոյանալու համար, իսկ մտքումը ծիծաղում և՛ մօր և՛ երեխայոց վրայ և ամենքին արհամարում... Նա, ամեն ինչ անում է փողի համար և հաճոյանալով, աւելի շատ հունձ է ունենում. փողը Աստուած է նրա համար, որը տալիս է նրան և՛ տուն և՛ հաց և՛ թատրոն։ Նրանով նա գնում է կնոջ զեղեցկութիւնը, երգչի երգը, դերասանի խաղը, վիպասանի վէպը, դիանակների զրածը. և հասարակութեան, մեր փթած հասարակութեան յարգանքը...

Ահա քահանան, որ Աստուածաբանութիւն է սովորել, կամ առանց մի «բանութեան» խուզում է ժողովրդին և այն էլ այնպէ՞ս, որ կաշին էլ հեռն է կտրում. որքան շատ խուզում այնքան ախորժակը բացւում. նա, իր համար պալատ է կառուցել և ապրում է բուրժուայի ճոխութեամբ. նա տներ ունի վարձով տուած, փողեր տոկոսով, ամառանոցումն էլ՝ մի կոկիկ վիլլա.... ձիշտ է, սև նժոյգներով կառք չի պահում նա սեփական բոլորովին ամայութեան մատնելով՝ վանքի իրեղէնները փոխադրեց Հաւթուան, և իւր ասելով՝ «մտադիր է այժմ ժողովրդական պէտքի լոբջ գործերով զբաղուելու...» Բա՛յ կ'նայէք աչքդ օք, ինչ են այդ լուրջ գործերը. ճիշտ այն, ինչ որ մի քանի տարի առաջ անում էր իր նման գատնազդեստ Խոյ-խանը... բռնել խեղճ ժողովրդին և գանագան սուտ ու շինծու պատճառներ բերելով՝ փող կորզել նրանից։

Զեմ ուզում մանրամասնութեանց մէջ մտնել, միայն կ'տամ ընթերցողներին (որքան ինձ յայտնի է) այն տուգանքների ցուցակը, որ առել է հայը Արսէնը մօտ մի ամսուայ ընթացքում Սալմաստի խեղճ ժողովրդից։

Սաւրաջի Յովսէփ Սողոմոնեանից 150 ղրան, պատճառ բերելով, որ ձին արագ է քշել և հրել մի կնոջ։ Նոյնից ևս (տեղը փափուկ է տեսել) 50 ղրան, որ Դիլմանում կռուել է քարտաշ Բաբօյի և Գասպարի հետ։ Քարտաշ Գասպարից 30 ղրան, Բաբօյից 20 ղրան որ յիշեալների խնդրանօք պատժել և տուգանքի է ենթարկել Սաւրաջի Յովսէփին։

Ճարեցի Մելիք Թումայից 200 ղրան, և բռնի ոյժով ստիպել է յիշեալի հարսին վերադառնալ իր ամուսնու մօտ։ (Մի քանի տխուր և անմխիթար պատճառներով Մելիք Թումայի հարսը հեռացած է լինում իւր սկեսրայրի տանից)։

Այստեղ չեմ ուզում բերել այն դրաման որ տեղի ունեցաւ նախ հին-քաղաքում, ապա Հաւթուանում, հայը Արսենի ներկայութեամբ Մելիքի հարսին բռնի Ճարայ քաշելու համար։

Հաւթուան Ղադիմենց տնից 500 ղրան իրեն, 50 ղրան և մի բեռ ցորեն իւր ծառային, ահա թէ ինչ միջոցաւ։

Ղադիմը մեռնելուց առաջ կտակում է 100 թուման եկեղեցուն, մնացորդ իւր ունեցածը իւր եղբօրը՝ Մուրադին ու միւս մեռած եղբօր որբերին։ Հայը Արսէնն այդ լսելով, իսկոյն կանչում է Մուրադին և պահանջում է կտակը։ Մուրադը յանձնում է հայը Արսէնին, հայը սուրբը վերցնում է կտակը և վռնդում Մուրադին՝ պատճառ բերելով որ կտակը անվաւեր և տպօրինի է։

Խեղճ Մուրադը մնում է շուարած. բայց արդէն ծուղակի մէջ էր։—Ի՞նչ անէր. անկարող չէր կարող ստանալ այն ժառանգութիւնը որ իւր հանգուցեալ եղբայրը թողել էր իրան և իր միւս մեռած եղբօր որբերին։ Մի քանի միջնորդներ էլ բերում, սակայն բոլորին էլ հայը սուրբը վռնդում է ու անպատասխան, միևնոյն ժամանակ պատռում է պատռել կտակը...։ Իսկոյն մէջ է ընկնում պ. Տեսուչը և համոզում Մուրադին 500 ղրան «աջահամբոյր» տալ հայը սուրբին որից և ստանալ կտակը վաւերացնելուց յետոյ։ Այդպէս էր լինում։ Մուրադը 500 ղրան տալիս է հայը Արսէնին, 50 ղրան հայը սուրբի ծառային մի բեռ ցորենի հետ և ստանում է կտակը վաւերացրած։

Մահլամցի Զաքեոսից և Մահտեսի Դաւիդից 250 ղրան ըստ հայը Արսենի «բռնի ուժով» տեղական տեսուչ Մ. Աւետիսեանի համար...։

Հայը Արսենի պատիժները երկու տեսակ են I. տուգանքի ենթարկել, II անձամբ ծեծել։

Հին քաղաքում ձիուց վեր է գալիս, փողոցում Մարալի-աղջիկ Նագլուի մազերը փաթաթում ձեռին և զրպարտում պատուաբեցիր ծեծում... Փողոցից անցնող թուրքերը հաւաքւում են, տանում հայ կնոջը հայ հոգևորականի ճանկերից...։ Թուրքերի հարցին թէ ինչու է հայը Արսէնը ծեծում մի կնոջ, հայը Արսէնը պատասխանում է հեռաւեալը «ես իրրև հոգևոր հայը, իրաւունք ունիմ իմ որդիներիս անձամբ պատժելու...։» Հաֆտուան եղբ., Ղադիմի կտակի համար Հաֆտուանի նշանաւոր անձերից մէկը՝ պ. Մարգար Մելիք-Մար-

դարեանը, հայը սուրբին նկատում է որ անդադարայն է նրա վարմունքը, Հայը Արսէնն տեսնելով մը յարձակուում է նրա վրայ, աղաղակում և սանդուղներից ցած գլորում յանդգնէն Մելիք-Մարգարեանին...:

Ախտխանայում Աբրահամ Գրիգորեանի դրդմամբ, առանց պատճառի, հայը Արսէնն ցատկում է ծեծել և մոգերը սափրել տալ Մահտեսի Մնացականի կնոջը. ժողովուրդը չը դիմանալով մի այդպիսի խայտառակութեան, ահագին բազմութեամբ թափվում է տէր Թադէոսի տան առաջ, որտեղ հորոշուած է լինում ծեծել կնոջը և գոռում են որ եթէ հայը սուրբը համարձակուի ամենափոքր մի վիրաւորական խօսք անգամ ասել այդ հարսին, այն ժամանակ ուղղակի Նրանք իրենց թոյլ կըտան վարուել հայը սուրբի հետ նոյն եղանակաւ: Հայը Արսէնը տեսնում է, որ բանը վատ հետևանք պիտի ստանայ, առանց մի խօսք ասելու հեռացնում է կնոջը: Նոյն երեկոյեան տէր Թադէոսի տան մէջ ընթրելու ժամանակ, Հայը Արսէնն առաջարկում է մի կենաց բաժակ, որը Սարգիս Պողոսեանը չի ցանկանում խմել: Հայը սուրբը վեր է թռչում և անձամբ ծեծում է Սարգսին: Միւս առաւօտ Սարգիսը գնում է իր «յանցանքի» համար ներողութիւն խնդրելու հայը սուրբից, բայց հայը Արսէնն մերժում է թէ նրա ներողութիւնը և թէ նրա աջահամբոյրը:

Հետևեալ օրն երբ հայը Արսէնն Ախտխանայից գնում է եղել Հոփտուան Բախշը-գիւղի լճի մօտ պատահում է նրան Սայդոսի մեծ եղբայր Պետրոսը, որ դիմում է նրան հետևեալ խօսքերով «Ինձ ներիր, հայր սուրբ, մենք հարբած ենք եղել, դէ մի բան է եղել անցել է»: Հայը Արսէնն իսկոյն ներման շնորհ է անում. «Ես քեզ ներում եմ, և դրա համար պիտի ստանամ այն աջահամբոյրը, որ մի քանի անգամ ձեր տունը դու առաջարկել ես, իսկ ես չեմ ընդունել...»

Աւհա թէ որպիսի «Թանկագին ընծաների» տէր է դարձրել մեզ Ս.տրպատականի բարեխնամ առաջնորդը: Շնորհակալութիւն:

Փիր-Զէվուշ

ՆԱՄԱԿ ՄԱԼԱԶԱՑԻՑ

3 փետ. 95

Քաղաքիս հայ հասարակութեան խորին տրտմութիւնը, միատեսակ մերելային սաղտկալի կեանքն ու անսաքբերութիւնը դէպի ամենամի բարեգործական հասարակական նպատակի իւր զարգացնակէտին է հասել: Գծուծ, անձնական սառը շահերը խեղդել են նրանց մէջ ամեն ինչ, որ վեհ է, բարձր և իդեալական: Իւրաքանչիւր քայլափոխում մի շահու համար իրարու մատնութիւն, իրարու տունը քանդել, աւերել հիմնայինն... էլ ուրիշ ոչինչ:

Հայաստանի աղեկեզ լուրերը ոչ մի ազդեցութիւն, ոչ մի տպաւորութիւն չեն գործել մարազայի հայերի ապաստաժքար սրտերի վրայ: Մարազայիք զանազան անբարոյական նպատակների համար հարիւրներով կը վոստնեն. Լակերը խնդիրը դալիս է ազգային, հասարակական հաքյերի վրայ, մեռնում են, չեն ուզում բաց անել իւրեանց նեղ բռակի քերանը:

Աբրպիսի դէպքերում նրանք ապուէստալին զարմանալի ճարպկութեամբ իրանց նիւթական վիճակը այնպէս են ներկայացնում, որպէս թէ օրդայ հացի կարօտ լինեն:

Աւհա երկու ամսից իվեր է, որ մի հանգանակութիւն է բացուել հասարակութեան մէջ յօգուտ Հայաստանի սովալուկ թշուառների, բայց ոչ մէկը մարազայիներից արիւթիւն չէ ունեցել. մի շահի ստորագրելու այնտեղ:

Այդ տխուր իրողութիւնները մարազայիների մասին ասելուց յետոյ, պէտք է նկատել որ նոքա գուրկ են միակ հասարակական, իր կոչմանը արժանի անձնուէր գործիչից:

Ի՞նչ է անում մեր այստեղի ազգային ոգուսցիչը ներկայ կրիտիկական ժամերում,—մինչ մարդկային հազարաւոր մատաղ կեանքեր մահի են դատապարտվում, մինչ քաղաքակրթեալ աշխարհը տենդալին իրարանցման, շարժման մէջ է գտնվում,—փակած նա իւր մթին «խալվաթխանէն» թիլիմաններեն է գրում, գրքի է նայում ռամիկ ժողովրդին, նրա արիւն քրտինքով վաստակած շահիները դուրս կորզելու համար:

Մի ամիս է արդէն, որ թաւրիզեցի և այլ տեղացի մի քանի վաճառական ու այլ արհեստի տէր վառվռուն երիտասարդներ պատրաստութիւններ են տեսնում մօտերս մի ներկայացում տալու մովեալների օգտին: Քանիցս յիշեալ երիտասարդները դիմեցին պարոն ուսուցչին, որ մասնակցէ իրենց գլխաւորապէս այն բանի համար, որ տեղացի լինելով, ձեռնարկած գործը աւելի լաջող ելք ստանայ, բայց նա լայեղ չարաւ կեատա-կիւտանների (?!!) հետ մեր կենալ նստել: Միևնոյն ժամանակ մեր գրքաց տիրացու յիշած այդ կեատա-կիւտանները անցեալներս նորա նոր տարուայ առթիւ գրած մի ճառից քանի տառասխալներ հանեցին: Զարմանալի են մեր հոգաբարձուները, որ թոյլ են տալիս այդ արարածին պաշտօն վարել. միթէ նոյն ռոճիկով, որ տալիս են նրան, չենկարող մի արժանաւոր ուսուցիչ գտնել:

Տէր Տաճատ քահանան յաճախ մասնակցում է վերոյիշեալ երիտասարդների ժողովներին, գանազան ծրագիրներ է տալիս նրանց գործելու: Երիտասարդները չափազանց համակրանք են տէր հօրը իւրայդ գործունէութեան համար:

Օ—ր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան, 8 փետր. 95

Երկրորդ անգամն է որ կարդում ենք «Զաւիղում» մի պարսկահայ օրիորդի—Թագուհի Ս. Վարդանեանի նամակը—մի նամակ, փիլով հայուհին այնքան անկեղծ խօսքերով ու ջերմութեամբ նախատում է իրենց ծնողներին, որ չեն կամենում հոգ ցանել օրիորդաց դպրոցը բանալոց:

Համակրելի և ուրախալի է միանգամայն, որ Պարսկաստանի օրիորդը ուսման ծարաւը հասկանալով, իր հա մնալը հասկանալով, գրիչ է ձեռը յառնում և բողոքում, իրաւացի բողոքում:

Ինքնասիրեան դա մի ցաւ ապացոյց է, ցոյց տալու համար հասարակութեան թէ ինչ նշանակութիւն ունի ուսումնարանը իր գոյութեամբ, և թէ ինչ ապագայ կարելի է յուսալ եթէ օրիորդաց դպրոցը շարունակէր դարձեալ. դժբաղդաբար, խեղճ օրիորդների փափագը անկատար է մնացել:

Եթէ ուսումնարանը չը լինէր, արդեօք կարելի էր յուսալ որ երբ և իցէ, պարսկահայ օրիորդը իր իրաւունքները հասկանար, ինքնաճանաչութեան հասնէր և իր կրթութեան կարևորութիւնը ըմբռնելով, բողոքելու առաջադիմական աստիճանին հասնէր: Բողոքը գիտակցութեան հետևանք է, իսկ գիտակցութիւնը յառաջանում է կրթութիւնից, գիտութիւնից:

Բայց հարկաւոր է մի բան յայտնել օր. Թագուհի Վարդանեանին—այդ այն է որ լոկ բողոքելով, իրենց ուսումնարանը չի բացուիլ և մինչև իսկ բողոքը ծիծաղ կը շարժի մի այնպիսի հասարակութեան մէջ որպիսին է Թէհրանը: Նա չէ ցանկանում այդպիսի բողոքներ ունենալ և չէ էլ լսի եթէ մի քանի դարեր շարունակէիք. ուսումնարանը բացելու համար հարկաւոր է նիւթական միջոց չը խնայել, որովհետև դա է ամենագլխաւորը, իսկ մեր այստեղի հասարակութիւնը ուսումնարանին օգտին տուած փողը աւելորդ է համարում և ոչ թէ միայն աւելորդ, այլ և միանգամայն ի զուր նրան ասելի են ուսուցիչները, նրան ասելի են ուսումնարան այցելող օրիորդները: Եթէ երբ և իցէ մէկի հետ ուսումնարանական գործերի մասին բանակուի մտնէք, կը լսէք որ նա ձեզ կասէ, «աղջկայ վարժարանն ինչ է, աղջիկն ինչ, կարդալն ինչ, աղջիկն ազար կարդայ, դատանթուն կը սովրի» ահա ձեզ ձեր ծնողների պատասխանը, այժմ դուք ինքներդ երևակայեցէք, այս պատասխանից յետոյ նա կը յօժարուի կոպէկն ամդամ տալ այն հիմնարկութեան, որին ինքը ասելով ասում է, որի զորութեանն նա հակառակ է: Իսկ երբ փողը չը կայ, երբէք չէք կարող ձեր ցանկացած փափագին հասնել, օրիորդներ, որին դուք ջերմ առ ջերմ սիրում էք, որի նշանակութիւնը հասկացել էք:

Թէհրանաբնակ հայ հասարակութեան հարկաւոր է խթաններ, ցոյց տալու համար թէ քայլել է պէտք, դասանել է պէտք և լաւ մայրիք պատրաստել: Խօսեցէք, բողոքեցէք հայուհիներ, դուք ձեր բողոքը ազդի, դուք ձեր ազդակը լսելի լինի ձեր ծնողներին և հասկացնի որ լաւ հասարակութիւնը սերվում է կրթուած, ուսած մայրերից և որ հետևապէս աղջիկների կրթութիւնը աւելի կարևոր է, քան տղամարդկանցը:

Տիգրան Ս. Ցովսէփեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական «Московск. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Կ. Պոլսի դեսպան է նշանակվում Տիշկինը, արտաքին գործերի մինիստրութեան այժմեան ժամանակաւոր կառավարիչը. Տիշկինի փոխարէն արտաքին գործերի մինիստրի օգնական նշանակվում է Թէհրանի այժմեան դեսպան Բիւցովը, իսկ Թէհրանի համար դեսպան նշանակուելու է Պարիզի դեսպանութեան առաջին քարտուղար Դիրսը, որը մի քանի տարի առաջ Թէհրանի դեսպանութեան առաջին քարտուղարն էր:

—

Վանից մի նամակով հաղորդում են «Մշակին», որ այնտեղ կարմրուկն ու դիֆդերիտը 2300 չափ մանուկներ է կոտորել. քաղաքը սուգի մէջ է. չը կայ մի ընտանիք որ գոնէ մի զոհ տուած չը լինի»: Թշուառ եղբայրներ, բաւական չէր բոլոր աղէտները իրենց գլխին, այժմ էլ ապագայ սերունդն է կոտորվում: Քօլերան—գրում է նամակագիրը—երբէք այսպիսի սուր բնաւորութիւն չը ստացաւ, այսքան սոսկալի զոհեր չը տարաւ»:

—

Լրագիրները հաղորդում են որ այս տարի Մոսկվայում, տարին 2 անգամ հրատարակվելու է մի նոր հանդէս «Խօսք» վերնագրով, խմբագրութեամբ Ս. Մամիկոնեանի. տարեկան բաժանորդագինն է 3 ր. հասցէն է, Rédaction de la Revue «KHOSK», Moscou. ամբողջ տարին միայն երկու հատոր լոյս կը տեսնեն. առաջինը յուլիսի 1-ին, իսկ 2-րդը Դեկտ. 15-ին:

—

Երեքշաբթի 14 փետր. Թէհրանից մեկնեց Ռուսաց արտաքոյ կարգի դեսպան Գէն. Կուրապատկինը:

—

Մի բողոքական հայ «Շաւիղի» մի օրինակ նուէրը թողած լինելով խմբագրութեան տրամադրութեան տակ, յայտնում ենք այդ համարը Շաւարին գիւղի դպրոցին:

—

Կովկասի թերթերը հաղորդում են որ Նոր Նախիջևանում հրատարակուելու է հայերէն շաբաթաթերթ. դիմումներ եղել են իրաւունքների համար:

—

Թաւրիզից մի թղթակից հաղորդում է «Նոր-Դարին» որ Գրիգոր Թումանեան վերջերս խօստացել է Լիլաւա թաղում կառուցանել մի ընդարձակ օրիորդաց դպրոց իւր հանգուցեալ քրոջ յիշատակի համար:

—

Սովուշբուլաղից մեզ գրում են: «Ձեր պատուական թերթի համարներից մէկում կարդացի Սովուշբուլաղի հայ վաճառականների վերաբերեալ գրուածը. ճշմարիտ է թղթախաղութիւն կայ, բայց ոչ այնպէս, ինչպէս՝ պ. յոդուածագիրը գրում է, նամանաւանդ որ գրում է թէ ոչ մի լրագիր չեն ստանում..... ինչպէս երևում է, այդ գրող պարոնը կամ Սովուշբուլաղումն չէ կամ լրագիր բառը նորան ծանօթ չէ եղել որովհետև Սովուշբուլաղումն կայ ընդամենը հինգ հայ վաճառական և ստացվում է հետևեալ լրագիրները «Մշակ» «Նոր-Դար» Արձագանք», «Հնչակ» «Արմէնիա» և «Շաւիղ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի, և Եւրոպայի թերթերը, բոլորն էլ լիքն են հայերիս մասին գրուածքներով, հեռագիրներով և տեղեկութիւններով։ Եթէ պարսկահայը կամենում է իմանալ թէ ինչ է կատարվում իւր քթից հեռու, նրան հարկաւոր է առնւազն մի հատ Կովկասեան հայ թերթի բաժանորդը լինել և նրան սատանալ։

Ինչ որ իրը աչքալուսանք կարող ենք հաղորդել, այդ այն է, որ հայոց վեհ. Կաթուղիկոսը իր ընծին բարձր բարեսրտութիւնը ցոյց է տալիս նրանով, որ լիովին անտարբեր է և անշարժ այն խնդիրների մասին, որոնք ամենաէական են, իսկ դրա փոխարէն բոլ-բոլ տիտղոսներ է որ տալիս է զանազան եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների։

«Վեհ. Կաթուղիկոսը կամիլաւկայով վարձադրեց Համազասպ քահանային։— Վեհ. կաթուղ. կամիլաւկա տաւ Մուշեղ քահանային։— Վեհ. Հայրապետը արքութեան բարձր պաշտօնը (?) շնորհեց Թիֆլիզի առաջնորդին» և այլն և այլն արձանագրում է խղճմտանքօրէն «Նորդարը», առանց մի հատն իսկ բաց թողնելու։ Խորհուրդ կը տայինք բոլոր քահանաներին և վանքերի անկիւններում վեր ընկած վարդապետներին, նաև հասարակական ասպարէզը ապականող եպիսկոպոսներին՝ դիմել Վեհ. Կաթուղիկոսին, սրանից յարմար առիթ չը կայ տիտղոսներ շահելու համար։

*** Լրագիրները հաղորդում են որ ճեմարանից և Նուշիի դպրոցից արձակուած աշակերտներից 76 հոգի ընդունուել են Ներսիսեան դպրոցում։

Ի՞նչու են արձակել ճեմարանից և Նուշու դպրոցից այդքան աշակերտներ՝ հետաքրքիր է։ Ի՞նչու են նրանց ներս ընդունել Ներսիսեան դպրոցում—այդ էլ է հետաքրքիր։

*** Ցաւալի, խիստ ցաւալի լուրեր են հաղորդվում մեր թիւրքահայ եղբայրների մասին. ցուրտը, սովն ու հիւանդութիւնները, միացած շատ ուրիշ աղէտների հետ՝ կոտորում են, ոչնչացնում նրանց, իսկ միւս կողմից նամակներ են ուղղվում Կովկասի թերթերին, թղթակցութիւններ են տեղում մեր խմբագրութեան մէջ, որ Պարսկահայերը ոչ միայն անտարբեր են մնում այդ թշուառութիւնների առջև, այլ և ունին աղաներ (և ցաւալի է որ վարժապետ կոչվելու լրբութիւն ունեցող անձեր ևս) որոնք արգելք են լինում գործողներին, օգնութեան ձեռք կարկառել ուզող անձերին։ Կարդացէք այսօրՀայ Մարաղալի նամակը։ Այդպիսի 3 նամակներ տարբեր անձերից ստացել են խմբագրութեան մէջ միևնոյն քաղաքից միևնոյն ամբաստանութեամբ. այդպիսի այլ նամակներ է որ գալիս են և բոլորն էլ պիտի տալին ու պիտի ցոյց տան թէ որպիսի գծուծ անձնական շահերով տոգորուած՝ սատնասրտութեամբ ենք վերաբերվում դէպի մեր ընկերների թշուառութիւնները։

Կովկասի թերթերը սոսկալի լուրեր են հաղորդում։ Վանի մէջ դիֆտերիտից էլ մանուկ չը մնաց. 2300 հոգի կոտորուել են. հայերն էլ խո, Աստուած գիտէ ինչ դրութեան մէջ են. Էրզրում Սասուն... սովը տիրել է, կոտորվումեն, կոտորուել են, իսկ Թավրէզի ինտելիգենցիան (որպէս գրում են Թաւրէզի թղթակիցները նոյն իսկ Կովկասի թերթերում) թղթախաղի և արբեցութեան մէջ գիշերներ են լուսացնում...

Ահա այդպիսի կոնտրաստներ են պատկերացնում մի քանի շաբաթից ի վեր Կովկասի թերթերը։

*** «Ծարաղը» սկսել է մի քիչ լաւանալ. մի քանի համար է, որ տալիս է բաւական լուրջ յօդուածներ. գրողների մէջ աչքի է խփում իր սուր կրիտիկան գրիչով Եր. Պալեանը։ Կրիտիկական գրականութիւնը զարգացած չէ մեր մէջ, մինչդեռ կրիտիկան ունի իր շատ մեծ կարևորութիւնը գրականութեան զարգացման գործում։ Եր. Պալեանը ցոյց է տալիս որ ապագայում կարող է լաւ կրիտիկոս լինել. ցանկալի է որ նա շարունակէր մշակել իր ընտրած ասպարէզը։

«Ծարաղի» համար կը ցանկայինք մի քանի այդպիսի գրականագէտներ։

Վ. Ֆ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Հայրենիքի» մէջ կարդում ենք։ Էդիրնէի հայոց առաջնորդը, 6 քահանաներ և 28 հայ էֆէնտիներ մի շնորհակալութեան ուղերձ են կազմել և ուղարկել վեհ. Սուլթանին, ցաւ յայտնելով Անատոլուի մէջ մի քանի ծանծաղամիտների յեղափոխական ընթացքի մասին և աղօթքներ անելով Վեհ. Սուլթանի արեւշատութեան համար։

—«Standard»-ը հաղորդում է որ Ճապոնիան խաղաղութեան դաշնագրի համար հետեւեալ պայմաններն է առաջարկել. 1) Կորէայի անկախութիւնը Ճապոնիայի գերիշխանութեան տակ։ 2) միայն մի քանի կղզի կը թողնուի Չինացիներին. 3) Մի քանի ամրոցներ ոչնչացուի և Պորտ—Արթիւր, վէյ-հայ-վէյ յում ոչնչացնեն պատերազմական դիրքերը։ 4) Չինաստանի և Կորէայի մէջ տեղերում գտնուող բոլոր ամրոցները ոչնչացուին. 5) Չինացիների պատերազմական նաւերի ձեր և թիւը ինքը Ճապոնիան պիտի որոշի 6) Պատերազմական մի մեծ տուգանք կը վճարի Չինաստանը 7) Մի այնպիսի բարեկամական յարաբերութիւն հաստատի, որ Չինաստանը և Ճապոնիան նիզակակից լինին.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Զիֆու. 18 փետր. (Ն. տ.) Ճապոնական նաւը այստեղ հասաւ Ծովապետ Տինգի մարմնով և Վէյ-հայ Վէյից ազատուած սպաներով։ Մեծ պատիւներ տուեցին Ծովապետի աճիւնին։ Չինական դրոշակակիր նաւի նաւապետ Վենգը անձնասպան եղաւ, երբ Ճապոնացիք գրաւեցին Վէյ-հայ-Վէյը։ Չինաստանը խնդրեց Ճապոնիային՝ Պորտ-Արթիւր ուղարկել մի դեսպանութիւն, հանդիպելու համար Լիհունգ Զանգ փոխարքային, որպէս զի բանակցեն խաղաղութեան դաշինքների վրայ։

Լոնդոն 21 փետր. «Թայմզի» թղթակիցը հեռագրում է Գահիրէից որ խռովութեան նշաններ են երևում Ալէքսանդրիայում, յիշոցնող այն դէպքերը, որին հետևեց 1882-ի արաբներից քրիստոնեաներին արած կոտորածը։ Թղթակիցը աւելացնում է որ բեռուիններով սկսում են քաղաքի արուարձանները լցուել։ Խեդիվի մի ագենտ է տեսնուել, որ բեռուիններին խոստումներ է տանում և միջոցներ է տալիս Խեդիվի թիկնապահ զօրքի մէջ մտնելու։

Փարիզ. 21 փետր. Ֆրանսիական թերթերը յարձակվում են լորդ Կրոմերի և անգլիացոց Եգիպտոսում բռնած քաղաքականութեան վրայ։ «Journal des Debats» թերթը յօդուածներ է հրատարակում, որոնցով նա արդարացի է գտնում խեդիվի դէպի իր Մինիստրները ունեցած դժգոհութիւնը։

Եօգահամա. 21 փետր. Ճապոնական կառավարութիւնը պահանջեց պարլամենտից քուէարկելու էլի 100 միլիոն «են» պատերազմական ծախուց համար։

Լոնդոն. 22 փետր. Ճապոնական կառավարութիւնը մերժած լինելով դեսպան ուղարկել Պորտ-Արտիւր Լիհունգ-Զանգ փոխարքային հանդիպելու համար, ն. վեճափայլութիւնը ուղղակի առաջ է գնում դէպի Ճապոն խաղաղութեան դաշինքների մասին բանակցելու։ Պաշտօնական շրջաններում կարծվում է որ անգլիական կառավարութիւնը ի զուր է նշանակութիւն տալիս եգիպտական հարցին և որ երևցող մի քանի խռովութեան նշանները կարող են անհետևանք մնալ։

Պետերբուրգ. 22 փետր. Ռուսական միջերկրական ծովի նաւատորմիղին հրամայած է մտնել Խաղաղական օվկիանոսի ջրերը։

Լոնդոն. 24 փետր. Անգլիական կառավարութիւնը միտք չունի եգիպտական գարնիզօնը զօրեղացնելու։

Բերլին. 22 փետր. Ռէյխստագը քուէարկեց 8 միլիոն մարկ նոր զրահաւոր նաւեր կառուցանելու։ Արևելքում գերմանական վաճառականութիւնը պաշտպանելու համար։

Պետերբուրգ. 24 Այստեղ պաշտօնական շրջաններում պնդում են որ Ճապոնիան փափագում է լուրջ բանակցութեան մտնել Չինաստանի պատգամաւոր Լիհունգ Զանգի հետ, նրա Ճապոն հասնելու ժամանակ, հաշիանալով որ դրա հակառակը վատ ազդաւորութիւն կը թողնի Անգլիայի, Ռուսիայի և Ֆրանսիայի վրայ։

Հիրոշիմա. 24 փետր. Ճապոնական պարլամենտը քուարկեց 100 միլիոն ենի մի նոր փոխառութիւն պատերազմական ծախուց համար։

Լոնդոն. 25 փետր. Մորոկկոից հաղորդում են որ ապստամբ ցեղերը յարձակում գործեցին Մորոկկո քաղաքի վրայ և սուլթանի զօրքի հետ մի քանի կռիւ մղելուց յետոյ, աւարի տուին քաղաքը։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ՐԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռաշտի ընթերցասիրաց ընկերութեան ձեռնարկած վիճակախաղը ձգուել է դեկտ. 5-ին։ Ցանող տոմսերը հետևեալներն են։

№ 26	շահել է	200	ղուան
,, 73	,,	160	,,
,, 69	,,	100	,,
,, 84	,,	100	,,
,, 118	,,	50	,,
,, 114	,,	50	,,
,, 21	,,	50	,,
,, 101	,,	25	,,
,, 10	,,	25	,,
,, 92	,,	25	,,
,, 110	,,	25	,,
,, 52	,,	25	,,
,, 15	,,	25	,,
,, 111	,,	20	,,
,, 148	,,	20	,,
,, 150	,,	20	,,
,, 98	,,	20	,,
,, 109	,,	20	,,
,, 140	,,	20	,,
,, 25	,,	20	,,

—

Շահող տոմսակիրները կարող են ստանալ և Ռաշտի կայսերական բանկից։

Անդամ ընթերց. վարչութեան
Բ. Սողոմոնեան Յ. Գալստեան
Ա. Յովսէփեան Առաքել Ս.Մարգարեան

Մի տարուց հետէ Թաւրիզում գոյութիւն ունեցող «ընթերցասիրաց գրադարանական» ընկերութիւնը հարկ է համարում յայտարարել արդոյ հայ հասարակութեան իւր մի տարուայ հաշիւը, որ հետևեալն է

ՄՈՒՏՔ

մինչև 94 թ. դեկտ. 31-ը		
Անդամավճարներ է ստացուած	157 ղ.	55 կ.
Նուէրներ է ,,	56 ,,	87 կ.
Զանազան մանր օգուտներ՝	17 ,,	85 կ.
Երկու ներկայացումներից արդ.	648 ,,	40 ,,
Գումարն է	880 ,,	67 կէս

ԵԼՔ

Երկու ներկայացումների համար բեմի վարձ		
«Արամեան» դպրոցին	302 ղ.	70 կ.
Գրքեր է գնուած	143 ,,	50 ,,
Կարասիք	134 ,,	35 ,,
Զանազան ծախքեր և տան քրէդ	289 ,,	77 կէս
Անցաւ 95 թուի հաշիւն	10 ,,	35 կ.
Գումարն է	880 ղ.	67 կէս

Ի բաց առեալ գնուած գրքերը, ստացուած են նաև 130—կտորի չափ գրքեր, նուէրներ զանազան հաստատութիւններից և անձերից որոնց վարչութիւն յայտնում է իւր շնորհակալութիւնը։

Գալիս ենք հրապարակաւ յայտարարելու Վանաբայ Սուրբ Մինաս եկեղեցոյ հաշիւը։

			ղուան	շ.
1891-ին կանխիկ դրամագլուխն է եղել			424	4
92	,,	,,	151	17
93	,,	,,	66	13
94	,,	,,	116	16
Ծախք է եղել			113	4
Ծախքը եկամտից դուրս գալով մնում է զուտ դրամագլուխ			646	6

Վանաբի հասարակութիւն

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԹԻՖԼԻՍԻ ՏՊԱՐԱՆ
ՏՆՏԵՍԱԿՍ Գ. ՈՒԹԻՆԸ
Հրատարակութիւն «Մշակ» խմբագրութեան
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ
Դիմել. Tiflis, Rédaction «Mschak»